ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/138

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մառք» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Հակոբյանի (պետական գրանցման վկայական թիվ 271.110.02905),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.06.2020թ. թիվ 26/26/9305-2020 գրությամբ «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.06.2020թ. թիվ 01/61-10375 գրության հիման վրա, 23.06.2020թ. թիվ 26/26/9305-2020 գրությամբ նախաձեռնել է «Մառք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մառք» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Հակոբյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/138 ընթացակարգի շրջանակներում 03.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայն սխալ է տեղի ունեցել բանկային երաշխիքների հետ կապված:

«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ընթացակարգի շրջանակներում ներկայացված բանկային երաշխիքի ժամկետի շտկման համար տրամադրվել է 2 օր ժամկետ: Քանի որ համաճարակի հետևանքով բանկի աշխատակիցներն աշխատում են ոչ ամենօրյա ռեժիմով, շտկված՝ նոր բանկային երաշխիքը ներկայացվել է 12.06.2020թ.՝ սահմանված ժամկետից ուշ, իսկ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ընթացակարգի շրջանակներում ներկայացված բանկային երաշխիքը վերադարձվել է ժամկետի շտկման, սակայն այլևս շտկելու համար ժամկետ չի ունեցել, և շտկված բանկային երաշխիքը Ընկերության կողմից չի ներկայացվել:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.06.2020թ. թիվ 01/61-10375 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել են «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրերով գնման ընթացակարգեր:

Ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել «Մառք» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների որոշումներով վերոնշված ընթացակարգերի ընտրված մասնակից է ճանաչվել «Մառք» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով Մասնակցին ներկայացվել են պայմանագրեր կնքելու առաջարկներ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ներկայացված բանկային երաշխիքների վերջնաժամկետները չեն համապատասխանել ծառայությունների մատուցման վերջնաժամկետներին, և ներկայացված պայմանագրերը, բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման:

«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ներկայացված որակավորման ապահովման բանկային երաշխիքի ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ, իսկ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ներկայացված բանկային երաշխիքի ուղղում սահմանված ժամկետում չի կատարվել:

Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրերով գնման ընթացակարգերի շրջանակներում Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, առաջարկել է Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/138 ընթացակարգի շրջանակներում 03.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքի հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով, իսկ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի

բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգեր (հետայսու նաև՝ Ընթացակարգեր), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մառք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների 20.05.2020թ. և 22.05.2020թ նիստերի թիվ 2 արձանագրությունների համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

3.«Մառք» ՍՊԸ-ին 22.05.2020թ. ներկայացվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով, 26.05.2020թ.՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով պայմանագրեր կնքելու առաջարկներ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրերի ապահովումները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մառք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի պահովումները:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի վերջնաժամկետը չի համապատասխանել ծառայությունների մատուցման վերջնաժամկետին, և ներկայացված պայմանագրերը, բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման: Ընկերության կողմից բանկային երաշխիքի ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ, և վերջինս, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մառք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի պահովումները:

7. Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի վերջնաժամկետը չի համապատասխանել ծառայությունների մատուցման

վերջնաժամկետին, և ներկայացված պայմանագրերը, բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման: Ընկերության կողմից բանկային երաշխիքի ուղղում չի կատարվել, և վերջինս, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2020թ. թիվ 26/26/9305-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 19.06.2020թ. թիվ 01/61-10375 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպես՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով, իսկ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգեր, որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մառք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների 20.05.2020թ. և 22.05.2020թ նիստերի թիվ 2 արձանագրությունների համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

«Մառք» ՍՊԸ-ին 22.05.2020թ. ներկայացվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով, 26.05.2020թ.՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով պայմանագրեր կնքելու առաջարկներ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրերի ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մառք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի պահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի վերջնաժամկետը չի համապատասխանել ծառայությունների մատուցման վերջնաժամկետին, և ներկայացված պայմանագրերը, բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման: Ընկերության կողմից բանկային երաշխիքի ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ, և վերջինս, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մառք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի պահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի վերջնաժամկետը չի համապատասխանել ծառայությունների մատուցման վերջնաժամկետին, և ներկայացված պայմանագրերը, բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման: Ընկերության կողմից բանկային երաշխիքի ուղղում չի կատարվել, և վերջինս, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ Ընթացակարգերի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայան՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած **գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:**

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որը չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից սույն Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ գտնում եմ, որ «Մառք» ՍՊԸ-ն հրաժարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/169» և «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/173» ծածկագրերով պայմանագրերը կնքելուց և թույլ է տվել

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.06.2020թ. թիվ 26/26/9305-2020 գրությամբ «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մառք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**